ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 542-Ա 10 նոյեմբերի 2023 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ Մ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՈՒՄՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ N 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆԺԵԼԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԼԻԼԻԹ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 160-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման 1-ին կետի պահանջներն ու Անժելա Պետրոսյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անժելա Պետրոսյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործված մասը՝ 2023 թվականի նոյեմբերի 10-ից 2023 թվականի նոյեմբերի 30-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր:

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անժելա Պետրոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի լիազորությունների և պարտականությունների

կատարումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Լիլիթ Սահակյանին (առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

10.11.2023

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ